ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 օգոստոսի 2019 թվականի N 73-Ա

ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Գևորգ Շավարշի Ղալաչյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասին և շինությանը /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2157034, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0217-0014/ տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 9-րդ փողոց N 37 այգետնակ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2019 թվականի օգոստոսի 20
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 օգոստոսի 2019 թվականի N 74-Ա

ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Մարատ Դաշտոյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասին /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 1237485, կադաստրային ծածկագիր՝ 07-025-008-0015/ տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 5-րդ փողոց N 4 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2019 թվականի օգոստոսի 23
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 օգոստոսի 2019 թվականի N 75-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի «բ)» ենթակետով, հիմք ընդունելով Յուրի Սուրենի Չանչուրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Համարել օրինական Յուրի Սուրենի Չանչուրյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 4-րդ փողոցի 4-րդ փակուղու 4-րդ հասցեի բնակելի կառուցապատման հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0014-0094) ինքնակամ կառուցված 101,54 քառակուսի մետր արտաքին մակերեսով օժանդակ շինությունները (որից՝ 2007 թվականին կառուցած աստիճանավանդակ՝ 7,78 քառակուսի մետր, 2014 թվականին կառուցած մառան՝ 14,36 քառակուսի մետր, ծածկոց՝ 48,8 քառակուսի մետր, ջրավազան՝ 1,18 քառակուսի մետր, պարիսպ՝ 3,1 քառակուսի մետր, հենապատ՝ 1,96 քառակուսի մետր, 2018 թվականին կառուցած սանհանգույց՝ 24,36 քառակուսի մետր):

2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն

ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ինքնակամ շինությունների օրինականացման վճարները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) օժանդակ շինության յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար՝ 780 (յոթ հարյուր ութսուն) դրամ:

4. Հաշվի առնելով, որ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ շինությունները կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից հետո, օրինականացման համար Գետամեջի համայնքապետարանի 900115000094 հաշվեհամարին վճարել 79 210 (յոթանասունինը հազար երկու հարյուր տասը) դրամ:

5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2019 թվականի օգոստոսի 29
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 օգոստոսի 2019 թվականի N 76-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի «բ)» ենթակետով, հիմք ընդունելով Նատալիա Վլադիմիրի Բրասլավսկայայի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Համարել օրինական Նատալիա Վլադիմիրի Բրասլավսկայային սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 4-րդ փողոցի 3-րդ փակուղու 5-րդ հասցեի բնակելի կառուցապատման հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0014-0095) ինքնակամ՝ 2017 թվականին կառուցած պարիսպը՝ 4,43 քառակուսի մետր մակերեսով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ինքնակամ շինության օրինականացման վճարը սահմանված է հետևյալ հաշվարկով.

1) օժանդակ շինության յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար՝ 780 (յոթ հարյուր ութսուն) դրամ:

4. Հաշվի առնելով, որ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ շինությունը կառուցվել է 2001 թվականի մայիսի 15-ից հետո, օրինականացման համար Գետամեջի համայնքապետարանի 900115000094 հաշվեհամարին վճարել 3 460 (երեք հազար չորս հարյուր վաթսուն) դրամ:

5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2019 թվականի օգոստոսի 29
գ.Գետամեջ